

# ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



## ԱՆԻԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ՅՈՂԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ X-XIII ԴԴ.

### Գ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի բացառիկ դեր ուներ երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Պակաս կարևոր չէր նաև նրա՝ որպես կրոնական կենտրոնի նշանակությունը: Անիի հայոց կաթողիկոսի գահանիստն էր, այնտեղ էր հաստատվել նաև քաղաքի եպիսկոպոսական աթոռը: Անիում ու նրա մերձակայքում առկա էին պաշտամունքային մեծաթիվ կենտրոններ, որոնք, կրոնականից զատ, ակնառու էին իրենց տնտեսական կարողությամբ, որին հասել էին սոցիալական տարբեր շերտերի նվիրատվությունների շնորհիվ:

Անիի եկեղեցիների ու վանքերի ունեցվածքը տարբեր նշանակության կալվածքներ ու կայքեր էին՝ գյուղեր, կրպակներ, հյուրանոցներ, ձիթհանքեր, հողային տիրույթներ, ձեռագիր մատյաններ, թանկարժեք սպասքներ և շարժական ու անշարժ այլ արժեքներ:

Հողվածիս աղբյուրագիտական հիմքը քաղաքի եկեղեցիներին ու վանքերին փորագրված վիմագրերն են, որոնք յուրահատուկ պայմանագրեր են՝ կնքված նվիրատուների և հիշյալ հաստատությունների սպասավորների միջև: Եթե առաջինները նշում են իրենց նվիրաբերած կայքերը, դրանց ձեռք բերելու ուղիներն ու օտարման պայմանները, ապա հոգևոր սպասավորներն անդրադառնում են իրենց կողմից դրանց դիմաց կատարված արարողություններին: Իրավական բնույթի հիշյալ փաստագրերը կանոնակարգվում ու ամրագրվում էին երդումների ու անձեռքների բանաձևերով կամ վկաների հաստատումով:

Անիի վիմագիր արձանագրությունների ժամանակագրական սահմանները թեև ընդգրկում են շուրջ երեք ու կես հարյուրամյակ, սակայն այդ նվիրագրերը կցկտոր ու հատվածային են, մեծ թիվ են կազմում ոչնչացվածներն ու եղծվածները, ուստի հնարավոր չէ որոշակի ժամանակահատվածում որևէ եկեղեցու կամ վանքի ձեռք բերած բոլոր արժեքներն ի մի բերել: Այս ամենով հանդերձ՝ պահպանված վիմագրերից քաղաքի հոգևոր հաստատությունների հողային տիրույթների վերաբերյալ որոշակի գաղափար հնարավոր է կազմել:

Անիի վիմագրերը, վերծանվել, մեկնաբանվել ու հրատարակվել են տարբեր հեղինակների կողմից<sup>1</sup>: Դրանց մի մասը թարգմանվել է նաև օտար լեզուներով<sup>2</sup>: Քաղաքի վիմագրերի ժողովածուներից լավագույնը համարվում է Հ. Օրբելու հեղինակածը<sup>3</sup>, իսկ հնագիտական նյութերը պեղելու և ուսումնասիրելու գործում չափազանց մեծ է Ն. Յա. Մադի կատարած աշխատանքը<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրությունը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, «Օրբել», Տեղագրություն պատկերացոյց, հաւաքեաց Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1881, «Վիմական տարեգիր», Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:

<sup>2</sup> Տե՛ս Н. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, Կ. Բասմաջեան, Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բագնայի և Մարմաշիանու, Պարիս, 1931, G. Uluhogian, The evidence of inscriptions Ani "Dokuments of Armenian architecture" 12, Milano, 1984:

<sup>3</sup> Տե՛ս «Իվան հայ վիմագրության, Անի քաղաք», կազմեց Հ. Ա. Օրբելի, պրակ 1, Եր., 1966:

<sup>4</sup> Տե՛ս Н. Я. Марр, Ани, М.-Л., 1934:

Ժամանակագրական կարգով Անհի եկեղեցիների ու վանքերի հողային տիրույթների նվիրագրերից առաջինը Ս. Առաքելոց եկեղեցու հարավային մուտքի բարավորին արտաքուստ փորագրված իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու որդու՝ Արուղամր Պահլավունու ՆՁ (1031թ.) արձանագրությունն է, որով նա այդ եկեղեցուն նվիրում է կառնուտի արտը՝ իր եղբոր՝ Գրիգորի առողջության ու երկարակեցության համար<sup>5</sup>:

Ս. Փրկիչ եկեղեցու մուտքից արևմուտք՝ հինգերորդ կամարի մեջ, արտաքուստ պահպանվել է նրա կառուցողի՝ Ապլղարի Պահլավունու ՆՁԵ (1036թ.) շինարարական-նվիրատվական արձանագիրը, որով նա մեծարժեք կալվածքներ է նվիրաբերում խնդրո առարկա եկեղեցուն: Սրանց թվում նշվում են *այգի* և *հողեար*<sup>6</sup>: Տեքստից այգու տեսակը չի պարզվում, թեև այն կարող է նշանակել խաղողի մշակության վայր, իսկ *հողեարը* կարող է լինել թե՛ մշակովի և թե՛ անմշակ տարածք:

Մայր տաճարի հարավային գավթի արևելյան մույթերը միացնող կամարից վեր ներքուստ գրված, բայց թվագիրը չպահպանված ու արձանագրության անանուն հեղինակն իր Գեորգ որդու հիշատակի համար Մայր տաճարին է նվիրել Մաղնոցում գտնվող այգին<sup>7</sup>: Մաղնոցն, անտարակույս, ծաթերի բնակատեղին էր: Այս տեղանունը երևան է եկել քաղկեդոնականություն ընդունած հայերի *ծաթ* կամ *ծայթ* (*ծայր*) անվանաձևից և նշանակում է թերի, կիսատ, նվազ, անկատար<sup>8</sup>: Մաղնոցի տեղադրությունն անհայտ է:

Ս. Աստվածածին (Ռամբուշենց)<sup>9</sup> եկեղեցու արտաքուստ պահպանված երեսպատման երկու քարերին թվակիր չունեցող նվիրագրով ունի Գարեգյունն իր գանձագին արտը տվել է Ս. Աստվածածնին<sup>10</sup>: Համանման հողատարածքի նվիրաբերման օրինակ է Ապլղարի մարզպան Պահլավունու կողմից Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցուն *տափ* հատկացնելը<sup>11</sup>:

Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցու մուտքի բարավորին պահպանված ՆՁԶ (1037թ.) խաթարված բնագրի ընթեռնելի հատվածից պարզվում է, որ ի փոխհատուցումն *Շուշան տիկնաց տիկնոջ* հիշատակի պատարագածամերի՝ եկեղեցին ստացել է առատ պարգևներ, որոնց թվում հիշվում է *տնով* և *պահիգով* կապակցությունը<sup>12</sup>: *Պահիգ-պահեզի* նվիրատվություններին մենք առիթ կունենանք անդրադառնալու, նշենք, որ այստեղ այն բանջարանցի իմաստ ունի:

Ս. Փրկիչ եկեղեցու մուտքից արևմուտք, արտաքուստ գրված ՆՂԹ (1050թ.) նվիրագրով Օահիկն ու իր որդի Վարդը Ս. Փրկչին ու Ս. Հովհաննեսին նվիրել են *կորդ* տեղում իրենց շինած տունը և տան *բակը*<sup>13</sup>: Կորդը խոպան, անվար, անմշակ, ամայի հողատարածքն էր, իսկ բակը՝ տանը կից հողակտորը, որը սովորաբար կամ ցանկապատված էր լինում, կամ պարսպապատված: Բառի մյուս իմաստն անասունների մակաղատեղին է՝ փարախը կամ գոմը: Մեր օրինակում ընդունելին եզրույթի առաջին իմաստն է: Այդուհանդերձ, պարզ չէ, թե բակ կոչվածը տվյալ դեպքում մշակելի հողատարածք էր, ինչպես որ կարող ենք ասել բանջարանցի կամ պարտեզի մասին, թե՞ անմշակ:

<sup>5</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 12:

<sup>6</sup> Տե՛ս անդ, էջ 44-45:

<sup>7</sup> Տե՛ս անդ, էջ 39:

<sup>8</sup> «Ծաթերի» մասին տե՛ս Н. Я. Марр, Аркаун монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкидонитах, «Византийский временник», СПб, XII, 1905, էջ 29-30, Н. Адонц, О происхождении армян-цатов, ЖМНП, 1911, էջ 238-249 (վերջինս թարգմանվել է հայերեն և 1912թ. լույս տեսել «Հանդես Ամսօրեայ»-ի թ. 5-ում):

<sup>9</sup> Տե՛ս М. Brosset, Les ruines d' Ani, 1<sup>re</sup> partie, St. Pétersbourg, 1860, էջ 27:

<sup>10</sup> Հետևելով Հ. Օրբելուն՝ փակագծերում նշում ենք Անհի եկեղեցիների կառուցողների կամ նվիրատուների անունները:

<sup>11</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 51:

<sup>12</sup> Տե՛ս անդ, էջ 49:

<sup>13</sup> Տե՛ս անդ, էջ 48-49:

<sup>14</sup> Տե՛ս անդ, էջ 43:

Ս. Փրկիչ եկեղեցու ՈՒԲ (1193 թ.) գրությանը Տրդատ քահանան և իր կին Խուշուշը նորոգում են իրենց *գանձագին հայրենիքը*<sup>15</sup>։ Ս. Փրկիչը, կառուցում *ամառային և ձմեռային ժամատներ*, որոնցում օթևան են տալիս և սպասավորում հյուրերին։ Վերջիններին հացով և գինով ապահովելու համար նվիրատուներն իրենց սեփական ժառանգությունից նվիրում են Արուճում եղած չորս այգիները՝ Սաղարը, Ծլիկը, ԿոՎարածը և Բլար Խաչկայնը (Խաչկի բլուրը)<sup>16</sup>։ Եկեղեցուն նվիրված կալվածքների թվում էին նաև . «...ՄԵԾ ԱՐՏ ԲԵՆԵՆՑՆ :Ժ: ԿԱՊԾՈ, ՄԻՆ Ի ՄԻՔԵՍՆ Ի ԶՐՈՂՍՆ ԲԵՆԵՆՑՆ ԱՅՍ Է Ի ՊՂՊՂԻԿ...»<sup>16</sup>։ Այս համատեքստում կարևոր է *Ժ* (100) *կապիճի* հիշատակումը Բելենց մեծ արտի կապակցությամբ։ Հյուրըմանի բացատրությամբ, որին հետևում է Հ. Աճառյանը, կապիճը ծագում է պահլավերեն *kapic*-ից, պարսկերեն *kaviz*-ից, որի ստուգաբանությունը մնում է անհայտ<sup>17</sup>։

Ուսումնասիրողները բառի զուգահեռը տեսնում են ուրարտերենում, որպես ընդեղենի անորոշ կշռորդ<sup>18</sup>։ Այն գրիվի 1/10-ն է, ցորենի և ուրիշ չոր նյութերի հատուկ չափը։ Բառի երկրորդ իմաստը ջորեբեռ, մեկ ջորեբեռ ցորեն ցանելու հողատարածքն է<sup>19</sup>։

Կապիճի չափի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ։ Ըստ Հ. Մանանդյանի՝ այն 1,224 կգ է կամ 979, 8 գրամ<sup>20</sup>, ըստ Ս. Մալխասյանի՝ 2913, 240 գրամ<sup>21</sup>։ Հիշվում են նաև այլ թվեր։

Կապիճն ունեցել է տարբեր կշռորդներ։ Առաջինը, որ կոչվում է մեծ կապիճ, հավասար է եղել մեկ իշաբեռին կամ մեկ ջորեբեռին և կշռորդ է եղել 115, 344 կգ<sup>22</sup>։ Այս կապիճը մեզ հայտնի է Բյուզանդիայի՝ Արևելքի բանակաթեմի կատապան, մագիստրոս Բագրատ Վխկացու կողմից Անիի Մայր տաճարի արևմտյան պատին 1058-1060 թթ. փորագրած արձանագրությունից, որտեղ նա քաղաք բերվող մեկ կապիճի (ցորենի) մաքսը 6 դրամից իջեցնում է 4-ի<sup>23</sup>։

Երկրորդը միջին կապիճն է, որի մասին տեղեկացնում է X դ. արաբ աշխարհագիր ալ-Մուկադդասին։ Այս կապիճը (*кафиз*) ըստ Վ. Հինցի տարածված էր Մարաղայում և Արաջանում ու կշռորդ էր 8, 125 կգ-ի<sup>24</sup>։ Ուսումնասիրողները սա նշմարում են Ամբերդի նժե (1026 թ.) արձանագրության մեջ, ուր Վահրամ Պահլավունին Ամբերդի եպիսկոպոսական աթոռի օգտին *պտուղ* հարկի չափը յուրաքանչյուր տան համար սահմանել էր երկու կապիճ ցորեն<sup>25</sup>։

Երրորդը փոքր կապիճն է՝ վկայված V դ. մատենագիրներ Եղիշեի, Ղազար Փարպեցու գործերում, բայց գործածական ավելի վաղ շրջանից։ Այս կապիճը հավասար է 0,887 կամ 0,864 կգ<sup>26</sup>։

<sup>15</sup> Տե՛ս անդ, էջ 47։

<sup>16</sup> Անդ։

<sup>17</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Եր., 1973, էջ 525։

<sup>18</sup> Տե՛ս Ս. Բարխուդարյան, Մի քանի դիտողություններ Երևանի կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, ՀԽՍՀ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1947, թ. 5, էջ 75, Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 360։

<sup>19</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, էջ 525։ Հ. Աճառյանը կապիճի՝ ջորեբեռի մասին վկայությունը քաղել է Մ. Cohen-ի «Bulletin de la Societe' Linguistique de Paris» հանդեսում (հ. 27, թ. 81) տպագրված նյութի-109-րդ էջից, որի վերնագիրը չի նշել։

<sup>20</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Կշիռներն ու չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երկեր, հ. Զ, Եր., 1985, էջ 290։

<sup>21</sup> Տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», կազմեց Ս. Մալխասյանց, հ. II, Եր., 1944, հավելված, էջ 512։

<sup>22</sup> Տե՛ս Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, Եր., 1989, էջ 185, 187։

<sup>23</sup> Տե՛ս «Իիվան I», էջ 37։

<sup>24</sup> Տե՛ս В. Хинц, Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, М., 1979, էջ 50-51։

<sup>25</sup> Տե՛ս Ս. Ավագյանի «Վահրամ Պահլավունու 1026թ. արձանագրությունն Ամբերդում և եկեղեցական պտղին միջնադարյան Հայաստանում» հոդվածը հեղինակի «Վիմագրական պրպտումներ» գրքում, Եր., 1986, էջ 49։

<sup>26</sup> Տե՛ս Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 193։

Այսպիսով, մենք ունենք կապիճի տարբեր՝ մեծ, միջին ու փոքր միավորներ: Մինչ սրանցից որևէ մեկին Բեխենց արտի կապակցությամբ նախապատվություն տալը, հարկավոր է նաև պարզել, թե ինչպես պետք է որոշել կապիճով տրված արտի չափը: Դրա համար կարող ենք երկու ելակետ ունենալ.

ա) կապիճով արտահայտված թիվը ցույց է տալիս արտում ցանվող սերմացուի չափը:

բ) Նույն թիվը ցույց է տալիս արտից ստացվող բերքի չափը: Նախապատվությունը տալիս ենք առաջինին, որովհետև ցանվող սերմացուն կայուն չափ էր, իսկ ստացվող բերքը, կախված կլիմայական պայմաններից, կարող էր փոփոխական լինել: Արտերի մակերեսները բնամթերքի ուրիշ միավորներով արտահայտելիս միշտ նկատի է առնվում դրանցում ցանվող սերմացուի չափը:

Այժմ պարզենք, թե սերմացուի Ը (100) թվի ամենահավանական արտահայտությունը կապիճներից որով կլինի՝ մեծո՞վ, փոքրո՞վ, թե՞ միջինով:

Փոքր կապիճով արտահայտելիս կստանանք 100 . 0,887-88,7կգ կամ 100 . 0,864-86,4կգ սերմացու: Այս թվերը խիստ փոքր կլինեն *մեծ արտ* կոչվող տեղում սերմացու ցանելու համար: Մեծ կապիճով արտահայտելիս կունենանք 100 . 115,344 կգ սերմացու, որն, աճշուշտ, մեծ թիվ է: Սրանից բացի, մեծ կապիճի հնարավորությունն անհավանական է դիտվում նաև այն առումով, որ այդ միավորն առավելապես գործածական է եղել մաքսային գործառնություններում, ինչպես որ ցույց է տալիս Բագրատ Վխկացու արձանագրությունը: Հավանականությունը հանգում է միջին կապիճին՝ 100 . 8,125 կգ - 812,5 կգ: Այս թիվը ցույց է տալիս Բեխենց մեծ արտում ցանվող ցորենի կամ գարու չափը, և եթե այն վերածենք փթի, կստանանք մոտավորապես 49,54 փութ: Միաժամանակ գիտենք, որ XIX դ. 80-ական թթ. տվյալներով մեկ փութ (16,38 կգ) ցորենը Օիրակում ցանում էր 1092 մ<sup>2</sup>, 1214մ<sup>2</sup> և 1366մ<sup>2</sup> հողատարածք, իսկ գարին՝ 1092մ<sup>2</sup>, 1360մ<sup>2</sup> և 1820մ<sup>2</sup>:<sup>27</sup> Հետևաբար, 49,54 փութ ցորենը կցաներ միջին հաշվով 6 հա. 517մ<sup>2</sup>, իսկ գարին՝ 7 հա. 535մ<sup>2</sup> հողատարածք, թվեր, որոնք կարող են ցույց տալ Բեխենց մեծ արտի չափը:

Աղջկաբերդի Ս. Աստվածածին կամ Կարմիր եկեղեցու հարավային պատի անկյունի մոտ, արտաքուստ պահպանված *մանդատորթախուցես, ամիրսպասալար, շահնշահ* Ջաքարե Ջաքարյանի շինարարական-նվիրատվական արձանագրության մեջ կարդում ենք. «... էՏՈՒ ՆՈՒԷՐ ԸՆՋԱԻՑ ԶԻՄ ԳԵԻՂՆ ՈՐ Է ՀԱՆԴԷՊ ՎԱՆԻՑՍ ԵԻ ԶՀԻՆՆ, ՈՐ ԿՈՉԻ ԱԻ (ԵՐ) ՓԱՆԴՈՒԿ ԵԻ ԶԵՐԵՐՈՒՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՂՈՎՆ ԵԻ ԶԻԻՐ ԾԱՂԿՈՑՆ ...ԵԻ ՊԱՐՏԷԶՍ ԱՌ ՍՏՈՐՈՏՈՎ ՎԱՆԻՑՍ ԵԻ ԶԻ(Ն)ՆԶ Ի ՅԱՅՍ ՍԱՀՄԱՆՈՎՍ ՊԱՐՏԷԶ ԿԱ...»<sup>28</sup>:

Ս. Աստվածածին եկեղեցին գտնվել է Ախուրյանի և Ծաղկոցաձորի խառնարանում՝ Միջնաբերդից դուրս, եռանկյունաձև հրվանդանի ծայրամասում: Հ. Օրբելու վկայությամբ՝ եկեղեցու մոտ պահպանվել են վանքի հետքեր և մի քանի սեպակներ<sup>29</sup>: Նվիրատուն տվել է վանքի դիմացի անունն անհայտ իր գյուղը, հին գյուղը, որը հայտնի է Աւեր փանդուկ անունով, Երերույքն իր բոլոր հողերով և ծաղկոցն ու մի քանի տեղերում եղած պարտեզները:

Տիգրան Հոնենցը Ախուրյանի կիրճի սանդղավանդակում կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, որի հարավային որմի արևելյան երեք հարթությունների վրա թողել է շինարարական-նվիրատվական ծավալուն արձանագրություն՝ գրված ՈԿԴ(1215 թ.)<sup>30</sup>:

Տիգրան Հոնենցը Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրել է իր գնած կամ հիմնած հետևյալ գյուղերը՝ «...ԳԱԻՌՈՒՍՈՆԵՑ ԳԵՂԻՆ ԿԷՍՆ, ՔԱՐՀՏԻՆ:Ե: ԴԱՆԿՆ, ՄՇԱԿՈՒՆԵՑ ԿԷՍՆ, ԿԱՂՂՈՒՑՆ ԿԷՍՆ, ՑԱՄԱՔԾՈՎՆ ԲՈԼՈՐ, ԽՈՒԶԱԾ

<sup>27</sup> Տե՛ս Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 186:

<sup>28</sup> «Դիվան I», էջ 58:

<sup>29</sup> Տե՛ս Մ. Ա. Օրբելի, Краткий путеводитель по городищу Ани, "Избр. труды", Ер., 1963, էջ 113-114:

<sup>30</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 63:

ՄԱՀՄՈՒՆԳԻ Ի ԿԱՐՈՒՑ ՅԵՐԿԻՐՆ ՈՒ ՑԸՆԴՈՑ: Բ: ԴԱՆԳՆ, ԽԱԶՈՐԿԱՆՆ  
ՀՈՂԵՐՆ ԵՒ ՓՆԴՈՒԿՆ...»<sup>31</sup>: Արձանագրության *Ցընդոյ* տեղանունը Կ. Բասմա-  
ջյանը վերծանել է *Հընդոյ*: Նա նաև *Հընդոյ-ն* չի համարել տեղանուն, այն դիտել է  
լնդեմ բայի արմատ ու թարգմանել ֆրանսերեն baratter, այսինքն ձիթհանք<sup>32</sup>:

Ն. Յա. Մառը հենվել է նախորդների վերծանության վրա՝ պահպանելով  
*ցունդ* ձևը<sup>33</sup>: Ըստ այդմ բառի ուղիղ ձևը ցունդ կամ ցինդն է դիտվում<sup>34</sup>: Սույն արձա-  
նագրությանն անդրադարձած Պ. Մուրադյանն առաջարկեց այս բառի նոր ընթեր-  
ցում՝ *Ունընդոյ*<sup>35</sup>:

Նվիրագրի այս հատվածն ուշադրության է արժանանում մի քանի առումներով.  
նախ՝ այն ցույց է տալիս նշված ժամանակաշրջանում գյուղերի մի մասի՝ որպես ավա-  
տական տիրույթների տրոհված լինելը: Այսպես, եթե ծամաքծովն ու Խուզած Մախ-  
սուհուն ամբողջովին են նվիրվել եկեղեցուն, որից պիտի փաստել դրանց՝ ամբողջա-  
կան ավատական տիրույթ լինելու, հետևաբար՝ լիովին Տիգրան Հոնենցին պատկա-  
նելու իրողությունը, ապա նույնը չի կարելի ասել Գառոտխնեցի<sup>36</sup>, Մշակունցի և  
Կաղղուցի վերաբերյալ, որովհետև վերջիններս կիսով չափ են նվիրաբերվել: Սակայն  
սա դեռ չի նշանակում, թե վերջիններիս միայն կեսն է պատկանել Տիգրան Հոնենցին:  
Չի բացառվում դրանց՝ Հոնենցին ամբողջովին պատկանելը և նրա կողմից միայն  
գյուղերի կես մասերի օտարումը: Համենայն դեպս, եթե Գառոտխնեցի և Մշակունցի  
վերաբերյալ հնարավոր չէ դա հաստատապես պնդել փաստեր չունենալու պատճա-  
ռով, ապա Կաղղուցի կապակցությամբ հաստատել կարող ենք, եթե հենվենք մեզ հա-  
սած երկու տվյալների վրա: Առաջինը, ինչպես տեսանք, Տիգրան Հոնենցի ՈԿԴ թ.  
տեղեկությունն է՝ Կաղղուցի կեսն իր իսկ ձեռքով նվիրելու մասին, իսկ երկրորդը Ա-  
պուղամբինը՝ Մագիստրոսի որդունը, որը 1261թ. Տիգրան Հոնենցի ժառանգներից  
(քննադրում՝ ի Տիգրանանց) գնում է Կաղղուցի մյուս կեսը և նվիրում Բագնայրի Ս.  
Աստվածածնին<sup>37</sup>: Նվիրատվություններից երկուսը՝ Քարհատը (Քարհատին) և Լուինը  
(Լընդոյ) օտարվել են համապատասխանաբար հինգ և երկու դանգերով<sup>38</sup>:

Տիգրան Հոնենցի և ուրիշ վավերագրերից պարզորոշ երևում է, որ օրինական  
էր համարվում ժառանգաբար փոխանցումով, վաճառքով կամ նվիրաբերություննե-  
րով ձեռք բերված սեփականատիրական իրավունքը, առանց որի մեկի տիրույթի օ-  
տարումն ու ժառանգում-փոխանցումը մեկ ուրիշին անհնարին էր: Ահա թե ինչու թե  
սեփականության օտարողը և թե դրա ստացողը այդ ակտը հատուկ կայքագրերով  
պարտադիր ամրագրում էին՝ իրավական հիմք տալով դրան:

<sup>31</sup> Անդ:

<sup>32</sup> Տե՛ս Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., թ. 40:

<sup>33</sup> Տե՛ս Մ. Я. Марр, Ани, էջ 34:

<sup>34</sup> Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, Եր., 1978, էջ 66:

<sup>35</sup> Տե՛ս Ս. Мурадян, Строительство и конфессия церкви Тиграша Онеца по памят-  
никам эпиграфики, "Историко-филологический журнал", 1985, № 4, էջ 175-190:

<sup>36</sup> Ն. Յա. Մառի կարծիքով այս գյուղի անունն աղավաղվել և դարձել է Գորխան: Այն  
գտնվել է Կարսի մարզում (տե՛ս Մ. Я. Марр, Ани, էջ 127, ծան. 120):

<sup>37</sup> Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրությունը, էջ 186:

<sup>38</sup> Քարհատի մեկ դանգը մինչև 1231թ. եղել է Վահրամ Լոռեցու և Օւշիկի գանձագին  
հայրենիքը, որը նրանք նույն թվին տվել են Հոռոտսուին (տե՛ս «Օիրակ», էջ 21): Դիվանում  
Քարհատի դանգերի թիվը վերծանվել է «Է», այսինքն՝ 7, այնինչ Կ. Բասմաջյանը տեքստի այս  
թվանշանը կարդում է «Ե»՝ 5, որն, անուշուտ. ճիշտ է: Նույն թվագիրը «Ե» է վերծանվել Ն. Սար-  
գիսյանի կողմից (տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրությունը, էջ 127): Բայց Կ. Բասմաջյանն իր  
հերթին սխալվում է, երբ դանգն այստեղ համարում է դրամի միավոր, որը տվյալ դեպքում  
կապ չունի դրամի հետ: Լայն իմաստով դանգը ունեցվածքի 1/6 մասն է (տե՛ս Յ. Хини,  
Мусульманские меры, էջ 20), հետևաբար որևէ գյուղ, կավածք, ունեցվածք կամ հաստիքներ  
ձեռնարկություն առավելագույնս կարողունակեր 6 (Ջ) դանգ: Գրականության մեջ դանգի քըն-  
նության հարցերը ներկայացրել է Ս. Ավագյանը (տե՛ս նրա «Վիմական արձանագրություննե-  
րի բառարանությունը», էջ 63-66): Նա Դիվանի «Է» դանգը ուղղում է «Ե», միաժամանակ աչքա-  
թող անում Կ. Բասմաջյանի և նրանից առաջ Ն. Սարգիսյանի ստույգ վերծանությունները:

ելնելով հողատիրության բնույթի և հողային իրավունքի տեսակետից՝ Տիգրան Հոնենցի նվիրատվությունները չեն տարբերվել հետագայի՝ XV-XVI դդ. նվիրատվություններից: Ըստ այսմ, Հայաստանում դիտվել է ավատային սեփականության մի ձև, որը կապ չուներ պետական կամ զինվորական ծառայության հետ և փոխանցվում էր ժառանգաբար ու օտարվում ընդհուպ վաճառքը: Հողատիրության այդ ձևը մեզանում հայտնի էր *հայրենիք* անվանումով, որը նույնացվել է արաբական *մուլքին*, մի տիրույթ, որը *հայրենիքին* զուգահեռ գոյություն ուներ VII-VIII դարերից<sup>39</sup>:

Հողի՝ մեր օրինակում գյուղի նկատմամբ սեփականատիրական իրավունքը չէր նշանակում հողատիրոջ կողմից այդ գյուղի հողային տարածքների սեփականում: Այն ցույց էր տալիս միայն տվյալ գյուղից ստացվող ռենտայի, այսինքն՝ բնամթերքի որոշ մասի յուրացումը նրա կողմից: Նույն կերպ, եթե գյուղը տրոհված էր դանգերի, ապա ենթադրվում էր սրանց համապատասխան մասերից բնամթերքի ստացումը:

Այլ կերպ ասած՝ Տիգրան Հոնենցն իր նվիրագրով ոչ թե հիշյալ գյուղերի հողատարածքների համապատասխան մասերն էր զիջում կամ, ինչպես ընդունված է ասել, օտարում եկեղեցուն, այլ դրանցից ստացվող հողային ռենտաների՝ բնարդյունքների համապատասխան մասերը: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն Տիգրան Հոնենցի նվիրատվության մաս են կազմում Անհի տարածքում եղած կայքերը կամ եկամտաբեր մի շարք աղբյուրներ: Սրանցից մեզ հետաքրքրողը Դվնա դրան մոտակայքում գնած և շինած բանջարանոցն է, քաղաքի դարպասների մոտ գտնվող շատ հողեր<sup>40</sup>: Նշվածներից բացի՝ նվիրատուն տարբեր գյուղերում գնելով ձեռք է բերել այգիների մի ամբողջ շարք ու նվիրել եկեղեցուն: Այդ մեկական այգիները գտնվել են Երևանում, Օշականում, Կոշում, Արուճում (Մազոտ անվամբ), Մրենում, Ծմակում (Կաթողիհող)<sup>41</sup>:

Տիգրան Հոնենցի նշված մեծաթիվ ու տարաբնույթ ձեռքբերումները՝ գնվածքները, աներկբա վկայությունն են նրա անբավ հարստության, որին նա տեր էր դարձել՝ ընտրելով գործունեության մի բնագավառ, որը ներառում էր փոխանակային առևտրի բոլոր ձևերը՝ ի մասնավորի դրամական առևտուրը: Այլ կերպ ասած՝ Տիգրան Հոնենցը սեղանավոր էր՝ դրամավաճառ, վաշխատու հողատեր:

Վաշխատությունը հին աշխարհում և միջնադարում բավական տարածված զբաղմունք էր: Այն կրկնակի նշանակություն ուներ. մի կողմից խթանում էր ձեռներեցությունը, իսկ մյուս կողմից՝ նպաստում էր սեփականության վերաբաշխմանը: Մեր օրինակը ցույց է տալիս գրավով Տիգրան Հոնենցի հողային տիրույթների սեփականատեր դառնալու փաստը: Պարտային այս գործառնությունների ձևակերպումների մաս է Տիգրան Հոնենցի գրած առանձին մեկ ուրիշ կտակ՝ *անդարձագիրք*, որով գրավ ստացած հողերը նա նույնպես տրամադրում է Ս. Գրիգորի վանքին, ապա հավելում՝ պարտապանների կողմից իրենց տիրույթները *թափելու*, այսինքն՝ փրկագնելու դեպքում ևս ստացված ոսկին, որը պետք է հասկանալ դրամի առումով, նվիրում է Ս. Գրիգորին<sup>42</sup>: Ն. Յա. Մառը *անդարձագիրք* թարգանում է *կտակ*, իսկ Հ. Փափագյանը՝ *փաստաթուղթ օտարման մասին*, համաձայն որի օտարումը շարիաթական տերմինով կոչվում է *վակֆնամե*<sup>43</sup>: Վերջինս հայ սկզբնաղբյուրներում լայն կիրառություն է ունեցել և գործածվել շուրջ երկու տասնյակ աղավաղյալ ձևերով՝ *ախվ*, *ոխվ*, *ոխև*, *ոհվ*, *վախմ*, *ոդք*<sup>44</sup> և այլն:

Անշուտ, հետաքրքիր կլիներ, եթե իմացվեր տվյալ ժամանակաշրջանի բանկային գործառնություններում ընդունված տոկոսաչափը, սակայն այս մասին սկզբնաղ-

<sup>39</sup> Տե՛ս Ա. Папазян, Аграрные отношения в Армении в XVII-XVIII вв., Ер., 1972, էջ 152-153, 155:

<sup>40</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 63:

<sup>41</sup> Տե՛ս անդ:

<sup>42</sup> Տե՛ս անդ:

<sup>43</sup> Տե՛ս Ա. Папазян, նշվ. աշխ., էջ 153:

<sup>44</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, Եր., 1960, էջ 22, ծան. 2:

քյուրներից ոչինչ հայտնի չէ, իսկ Բյուզանդիայում, որի տիրապետության տակ առ-  
ժամանակ գտնվել է Հայաստանը, ընդհանրապես տոկոսի նկատմամբ երկակի վե-  
րաբերմունք է եղել: Կայսրերից ոմանք արգելել են այն, ոմանք վերացրել այդ արգել-  
քը: Ընդհանուր առմամբ ընդունված են եղել 4, 6, 8, 12 տոկոսաչափերը: Այս թվերը  
երբեմն գերազանցվել են<sup>45</sup>:

Տիբուսի Էռնեստի խնդրո առարկա արձանագրության մեջ բերված *Յնդոյ (իմա  
Հընդոյ կամ Ունընդոյ): Բ: դանգո, Խաչորկանն հողերն և փնդուկն* կապակցությունը  
տարբեր վերծանությունների տեղիք է տվել: Ն. Յա. Մաոն այն ընթերցում է. *Յունդ  
գյուղի երկու դանգո, որտեղ կա խաչ*<sup>46</sup>: Փաստորեն նա հենվելով նախորդ հրատա-  
րակությունների վրա, որոնցում *հողեր* բառը բաց է թողնվել, *Խաչորկանն* բարդու-  
թյունը չի դիտում հատուկ անուն և բառիս կազմությունը իրավացիորեն անհարիր է  
համարում հայերենի քերականությանը<sup>47</sup>: Բայց, կարծում ենք, ընդունելի չէ նրա կող-  
մից նշված բառի՝ իբրև հատուկ անուն անտեսելը և *Յինդ* գյուղի հետ շաղկապելը:  
*Յինդը* քերականորեն կապվում է *: Բ: դանգոն* և սրա հետ կազմում է առանձին միա-  
վոր, այնինչ *Խաչորկանն հողերն և փնդուկն* պետք է դիտել առանձին միավորներ:  
Որ այս համատեքստում *Խաչորկանն հողերը* Յինդի հետ չեն կապվում, երևում է  
նաև նվիրաբերված մյուս գյուղերի ցանկից, որտեղ հիշատակվում են գյուղերը և  
դրանցից եկեղեցու օգտին մաս հանված բաժինները: Հետևաբար *Յինդը* բացառու-  
թյուն չէր կարող լինել, և *Խաչորկանն* բարդության կցումը նրան անհարկի կլիներ:

«Դիվանի» կազմողները *Խաչորկանն հողեր* կապակցության *Խաչորկանն*-ը,  
ինչպես Ղ. Ալիշանն է կարծել, համարել են տեղանուն<sup>48</sup>, իսկ Կ. Բասմաջյանը՝ անձ-  
նանուն<sup>49</sup>: Այս երկու վարկածները, սակայն, որևէ կերպ չեն հիմնավորվել: Վերջերս  
*Խաչորկանն*ը նորից անձնանուն դիտելու փորձ արվեց<sup>50</sup>, որի հեղինակը արձանագ-  
րության *հողեր* բառը կամայականորեն փոխում է *հանդամաս* բառով և եզրակաց-  
նում, թե փնդուկը չէր կարող հանդամասում կառուցվել: Այնինչ, եթե *Խաչորկանն հո-  
ղերը* նույնիսկ դիտենք հանդամաս, ապա այնտեղ փնդուկի առկայությունն անսովոր  
չի կարող լինել, որովհետև քաջ հայտնի է, որ միջնադարում առևտրական ճանա-  
պարհների վրա քարավանատների կամ պանդոկների առկայությունը սովորական էր:  
Խաչորկանն անձնանուն դիտող Ս. Ավագյանի հաջորդ կովանը Խաչորիկ ան-  
ձանվան հորինում է, որը վկայված չէ որևէ աղբյուրում: Բայց դա չի խանգարում, որ  
Հովհաննավանքի XII դարի մի նվիրագրում միայն մեկ անգամ հիշատակված Խաչա-  
տր կրոնավորի անվանաձևից բխեցվի *Խաչատրիկ > Խաչորիկ* անվանաձևը, իսկ վեր-  
ջինից էլ, սրա սեռական հոլովաձևը՝ *Խաչորիկան > Խաչորկանն*: Տեսական այս դա-  
տողությունները, սակայն, ինչպես նշվեց, չեն հաստատվում փաստական նյութերով:

Այսպիսով, *Խաչորկանն հողեր* կապակցությունն արտահայտում է այն տեղան-  
վան զաղափարը, որտեղ եղել է խաչ, և որևէ հիմք չունենք այն անձնանուն դիտելու:

<sup>45</sup> Տե՛ս «Византийская книга Эпарха», вступительная статья, перевод, комментарий  
М. Я. Сюзюмова, М., 1962, էջ 128, А. Kazdan, Interest (Tokos), The Oxford Dictionary of  
Byzantium, vol. 2, New-York-Oxford, 1991, էջ 1002, А. П. Каждан, Из экономической жизни  
Византии XI-XII вв. «Византийские очерки», Труды советских ученых к XIV конгрессу ви-  
зантинистов, М., 1971, էջ 211:

<sup>46</sup> Տե՛ս Н. Я. Мара, Ани, էջ 34:

<sup>47</sup> Տե՛ս անդ, էջ 127, ծան. 121, ըստ Ն. Յա. Մաոի՝ բառանջատման՝ խաչ որ կան = որ (որ)  
կան (կայ) խաչ:

<sup>48</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 136, հմմտ. «Օիրակ», էջ 179:

<sup>49</sup> Տե՛ս Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., թ. 40: Դա պարզորոշ երևում է տեքստի նրա՝ ֆրան-  
սերեն թարգմանությունից, երբ Խաչորկանից հետո նշվում է *Ses terres et son hôtellerie*:

<sup>50</sup> Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 116-118: Ս.  
Ավագյանի ասելով. «Կ. Բասմաջյանի վերծանության մեջ Խաչորկանն տառաշարը հանված  
է կապակցությունից և դիտված իբրև ինքնուրույն բառ, այսինքն՝ առանձին ունեցվածք» (նույն  
տեղում): Բայց, ինչպես նշեցինք նախորդ ծանոթագրության մեջ, Կ. Բասմաջյանի ֆրանսերեն  
թարգմանությունից երևում է, որ Խաչորկաննը նա դիտում է անձնանուն:

Մայր տաճարի կամարի քարի ցածրի մասում հայտնաբերվել է Մխիթարի և նրա ամուսնու՝ Ղիմեթիի ԶԽԲ (1293թ.) նվիրագիրը. «...ԵՍ ՄԽԻԹԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՂԻՄԵԹԻ ՏԻԱ (ԲԶ) ՄԵՐ ՊԱՀԵԶՆ Ի ԿԱՐՈՒՑ ԴՌԱՆ Է (ԵՒ): Ա: ԶԱՐԵԿ Ի ԿԱԹՈՂ (Ի) ԿԷՍ ԵՒ ՕՈՒՌՁԱՌ...»<sup>51</sup>: Այնուհետև նվիրատուները սպասավորներին պարտավորեցնում են տարեկան երկու օր պատարագ կատարել՝ մեկը նվիրված Մխիթարին, մյուսը՝ Ղիմեթիին<sup>52</sup>:

**Զարեքը** կամ **չարաքը** պարսկական կշռի չափ է, կազմում է **մեծ մանրի** 1/4 -ը և հավասար է 750 գրամի<sup>53</sup>: Կենտրոնական Ասիայում այն ևս գորածածական էր իբրև կշռի միավոր՝ 1/4 նշանակությամբ, նաև հողատարածքի մակերեսի չափի միավոր<sup>54</sup>: Եզրույթը կազմված է պարսկերեն *car + yak* (չորս + մեկ) բառերից<sup>55</sup>:

Զարաթն ընդհանրապես առնչվում է հողօգտագործման բնավարձակալության հետ, որը, Հայաստանից բացի, տարածված էր հարևան երկրներում<sup>56</sup>: Գյուղացիները կալվածատերերի հողերի մշակության դիմաց պարտավորվում էին նրանց հանձնել բնամթերքի որոշ մասը: Կալվածատիրոջը մաս հանված բնարդյունքը կարող էր կազմել հողատարածքից ստացված արդյունքի 1/4-ը, կեսը կամ ուրիշ մասերը, այսինքն՝ դրանք կախված էին կողմերի նախնական համաձայնությունից: Այսպիսով, չարեքյան արտերն այն մշակելի հողատարածքներն էին, որոնց արդյունքի 1/4-ը ստանալու պայմանով հողատերերը վարձակալության էին տալիս գյուղացիներին: **Զարեք հող** հասկացությունը մեկնվում է նաև այլ կերպ: Ըստ այսմ գյուղական համայնքին պատկանած հողերը հատկացվում էին համայնքի գերդաստաններին՝ ըստ վերջիններիս շնչաքանակի: Հողաբաժանման այս համակարգի հիմքում ընկած էր **համփաների, չարեքների, պճեղների** և ուրիշ մասերի սկզբունքը: Մեկ **համփա** հողաբաժինը տրվում էր 16, իսկ **չարեքը**՝ 4 հոգուց բաղկացած գերդաստանին<sup>57</sup>: Այս վիճակը վերծանելիս Հ. Օրբելին :Ա: թվանշանից առաջ վերականգնել է **եւ** շաղկապը, որն իրավացիորեն մերժվել է, որովհետև այդ դեպքում պարզ չէ, թե ինչի քառորդի մասին է խոսքը: Այնինչ :Ա: թվանշանը **պահէզի** որոշիչն է, նրա տարածության միավորը<sup>58</sup>: Նկատենք, որ ժամանակի ընթացքում այս տերմինով անվանված տարածքները դադարում են իրենց նախնական նշանակությունն արտահայտելուց, դառնում սոսկ հատուկ անուն: Օրինակ՝ 1771թ. մի կալվածագրում Խոր Վիրապի վանքի առաջնորդ Ավետիք վարդապետը Նորք գյուղում գտնվող Զարեքանոց այգու հողը տալիս է նորքեցի Ղազարի որդի Մարկոսին՝ միանգամայն այլ՝ այգի տնկելու և դրա արդյունքից օգտվելու պայմանով<sup>59</sup>: Նշվածից բացի՝ տերմինը կարող էր նշանակել որևէ հողատարածքի 1/4-ը, ինչպես դա ցույց է տալիս Վարդ-Ըմբելի ՈՄԳ (1204թ.) նվիրագիրը, ուր նվիրատուն հայտնում է Մեղիտոնի՝ Երևանում եղած այգու **չարեքը** իր կողմից «նորոգելու» և Ս. Գրիգորին տալու մասին<sup>60</sup>: Այսպիսով, Անիի հիշյալ նվիրագիրը պետք է հասկանալ հողատարածքի 1/4-ի իմաստով:

Նվիրված կալվածքներից մի քանիսը պատկերացում են տալիս ոչ միայն հոգևոր հաստատությունների նյութական ունեցվածքի, այլև՝ հողային տիրույթների կառուցվածքի վերաբերյալ՝ երևան հանելով դրանց տարբեր տիպերը: Որոշ արձագրություններում տրվում են սրանց որակական, տարածական հատկանիշները,

<sup>51</sup> «Դիվան Ի», էջ 40:

<sup>52</sup> Տե՛ս անդ:

<sup>53</sup> Տե՛ս **В. Хинц**, *Ոշվ. աշխ.*, էջ 44:

<sup>54</sup> Տե՛ս **Е. А. Давидович**, *Материалы по метрологии средневековой Средней Азии*, М., 1970, էջ 106, 121, 131:

<sup>55</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Բ. Գ, Եր., 1977, էջ 625-626:

<sup>56</sup> Տե՛ս **А. Али-Заде**, *Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв.*, Баку, 1956, էջ 75, 239:

<sup>57</sup> Տե՛ս **Л. Ս. Խաչիկյան**, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 125, ծան. 2, հմտ. նույնի «Տնտեսական գործարքների մասին», էջ 27-28:

<sup>58</sup> Տե՛ս **Ս. Ավագյան**, Վիժակալ արձանագրությունների բառարանություն, էջ 270-271:

<sup>59</sup> Տե՛ս «Կալվածագրեր», կազմեց Հ. Աբրահամյան, պրակ 1, Եր., 1941, էջ 92:

<sup>60</sup> Տե՛ս «Վիժակալ տարեգիր», էջ 46:



շեշտվում տեղագրությունն ու պատկանելիությունը, թեև պետք է նկատել, որ այդ սկզբունքը միշտ չի պահպանվում:

Որպես տիրույթի տիպ՝ նշվում է արտը: Հայտնի է արտի նվիրաբերության երեք դեպք: ՆՁ (1031թ.) Ապուղամր Պահլավունու կողմից Կառնուտի արտը տրվել է Ս. Առաքելոց եկեղեցուն<sup>61</sup>: Կառնուտը ստուգաբանորեն նշանակում է փշոտ արտ, որն ամենայն հավանականությամբ մշակելի էր, թեև պարզ չէ, թե այդ տեղում ի՞նչ էր մշակվում: Երկրորդը Գարեգունի գնած արտն էր, որի մասին քիչ գիտենք: Մեզ անհայտ թվականին նրան տիրել էր Ս. Աստվածածինը (Նամբուշենց)<sup>62</sup>: Արտի երրորդ և վերջին հիշատակությունը պահպանել է Ս. Փրկչի ՈՍԲ (1193թ.) արձանագրությունը, որով ամուսիններ Տրդատն ու Խուշուշը այդ եկեղեցուն են նվիրում Բեխենց մեծ արտը ուր ցանվում էր ցորեն<sup>63</sup>: Արձանագրությունից պարզ է դառնում ինչպես արտի տեղագրությունը, այնպես էլ նախկին տերերի տոհմանունը, որից արտն ստացել է իր անվանումը:

Հողային տիրույթի մեջ լայն ընդգրկում ունի բուն *հող* տերմինը: Հողն Անիում նույնպես մշակվող տարածք էր նշանակում: Ապլղարիք Պահլավունու ՆՁԵ (1036թ.) վիճագրով հողերը տարբերակվել են *այգուց* որպես այլ կարգի տիրույթներ ու *այգու* հետ տրվել Ս. Փրկչին<sup>64</sup>: Քաղաքի դարպասների մոտ եղած մշակելի տարածքները, որոնք Տիգրան Հոնենցը բնութագրում է *հողեր* բառով, նրա կողմից նվիրվել են Ս. Գրիգոր Լուսավորչին: Նույն նվիրագրից մութ է մնում *խաչորկանն* հողերի կարգը: Բայց ժամկետ գտնված և Կաթողիհող անվանում ստացածն այդի էր: Վերջինս նաև ցույց է տալիս այդ այգու՝ ժամանակին հայոց հայրապետին պատկանած լինելը: Այս ամենին տեղ էր դարձել Ս. Գրիգոր Լուսավորչի Տիգրան Հոնենցի շնորհիվ<sup>65</sup>:

Ծառնշահ Ջաքարե Ջաքարյանի 1191թ. արձանագրությամբ Ս. Աստվածածնի վանքին (Ջաքարեի եկեղեցուն) օտարված Երեբունյք գյուղի *ամենայն հող* արտահայտության տակ հասկանում ենք գյուղի հողային կարգերի հիմնական զանգվածի օտարումը<sup>66</sup>: Անիի վիճագրերում զգալի են *այգիների* նվիրատվությունները, թեև միշտ չեն պարզաբանվում դրանց տեսակները: Անորոշ են մնում Մայր տաճարին Ծաղնոցում եղած այգու նվիրատվության թե՛ ժամանակը և թե՛ նվիրատուն<sup>67</sup>: Որոշ չէ նաև Ապլղարիքի կողմից ՆՁԵ թ. Ս. Փրկչին հողերի հետ տրված այգու տեսակը: Մինչդեռ Տրդատ քահանայի և Խուշուշի նվիրած այգիները Արուճում խաղողի այգիներ էին: Հայտնի են նաև դրանց անունները՝ Սաղար, Օլիկ, Կովարած և Խաչիկի բլուր<sup>68</sup>:

Ս. Փրկչի ՆՁԵ թ. արձանագրության մեջ հայոց Պետրոս Կաթողիկոսի բնութագրումով Աշնակի այգին հիմնվել էր իր կողմից՝ սեփական միջոցներով, կորոշ տեղում: Այնտեղ պտղատու ծառեր են աճեցվել: Այգին պարսպապատ է եղել<sup>69</sup>:

Տիգրան Հոնենցը Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրել է մեկական այգիներ Երևանում, Օշականում, Կոշում, Արուճում (վերջինս կոչվել է Մազոտ և հիշատակվել հրճչյունափոխված՝ Էգի ձևով), Մրենում, Ծմակում, որն արդեն ծանոթ Կաթողիհողն է<sup>70</sup>: Իսկ թե ի՞նչ մեծություն ունեին այդ այգիները, որոշակի ոչինչ չի ասվում:

Որպես մշակովի հողակտոր վիճագրերում ավանդվում է *պահեզք*: Սրանցից մեկը Խաչով պահեզի կես ձևով, որը ոմն Ծապաղին գնել էր Հովթթթվանցից և նվիրել Ս. Առաքելոցին<sup>71</sup>, իսկ մյուսը նշված է ՉՍԲ (1293թ.) Մխիթարի և իր տիկնոջ՝ Ղիմեթիի՝ Մայր տաճարին գրած արձանագրության մեջ, որով Անիի՝ Կարսի դարպասի ուղղությամբ գտնվող պահեզի 1/4-ը տրվել է Կաթողիկենց<sup>72</sup>: Պահեզ են հիշվում նաև Տիգրան Հոնենցի հայտնի արձանագրության մեջ Անիի Դվան դուռն մոտ եղածը և Ս. Գրիգոր Լուսավորչի առջևում գտնվածը: Սրանցից առաջինը նվիրատուն գնել է և *շիճն*<sup>73</sup>: Այլ առիթով պահեզը շեշտվում է տան հետ միասին<sup>74</sup>, իսկ Ջաքարեի եկեղեցու

<sup>61</sup> Տե՛ս «Դիվան Ի», էջ 12:

<sup>62</sup> Տե՛ս անդ, էջ 51:

<sup>63</sup> Տե՛ս անդ, էջ 47:

<sup>64</sup> Տե՛ս անդ:

<sup>65</sup> Տե՛ս անդ, էջ 63:

<sup>66</sup> Տե՛ս անդ, էջ 58:

<sup>67</sup> Տե՛ս անդ, էջ 39:

<sup>68</sup> Տե՛ս անդ, էջ 47:

<sup>69</sup> Տե՛ս անդ, էջ 48:

<sup>70</sup> Տե՛ս անդ, էջ 63:

<sup>71</sup> Տե՛ս անդ, էջ 29:

<sup>72</sup> Տե՛ս անդ, էջ 40:

<sup>73</sup> Տե՛ս անդ, էջ 63:

<sup>74</sup> Տե՛ս անդ, էջ 49:

արձանագրության մեջ *պահէզը պարտէզներ* հնչյունափոխությանը վկայված է հիշյալ վանքի ստորոտի սահմաններում<sup>75</sup>:

Պահէզը բանջարանոցի նշանակություն ունի. վանի բարբառում *պախեզ* ձևով նշանակում էր *սեխի, ձմերուկի և վարունգի պարտեզ*, իսկ Մուշում *պահէզը* ցույց էր տալիս տան առջևի բանջարանոցը<sup>76</sup>:

Իբրև առանձին հողակտորներ հիշվում են նաև *կորոքը, տան բակը, ծաղկոցը, տափը, լանջնիւն, գետեզորը, քարափ և մացառ վայրերը*<sup>77</sup>:

Մինչ այժմ խոսվեց առանձին հողակտորների՝ արտերի, այգիների, բայց ոչ հողային խոշոր գանգվածների մասին, մինչդեռ դրանց նվիրատվությունների վերաբերյալ, ինչպես վերը տեսանք, նույնպես վկայություններ են հասել մեզ: Այդ տիրույթների կարգի մեջ ենք մտցնում գյուղերը՝ նախապես նկատի ունենալով հարցի երկակիությունը: Նախ՝ գյուղերի հողային տիրույթներն իրենց կառուցվածքով բարդ էին, այնուհետև՝ ոչ բոլոր գյուղերին պատկանող հողային կալվածքները կարող էին դասվել խոշոր տիրույթների շարքը, մասնավանդ որ գյուղերը, ըստ վիմագրերից մեկի, տրոհվում էին մեծերի և փոքրերի<sup>78</sup>: Այդուհանդերձ, եթե իրոք գյուղերը կարող ենք մտցնել խոշոր ավատական հողատիրության կարգի մեջ, ապա դրանց մասին ունենք ընդամենը երկու ակնարկ: Առաջինը Ջաքարե Ջաքարյանի 1191թ. իր անվան վանքին նրա դիմացի գյուղը և ուրիշ՝ Աւեր փանդուկ ու Երեւու(յ)ք գյուղերի նվիրատվություններն են: Հաջորդը Տիգրան Հոնենցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն անվանապես հիշատակված 7 գյուղերի ընծայումն է, թեև սրանցից ոչ բոլորն են ամբողջովին տրվել եկեղեցուն: Մի կարևոր նկատառում ևս. եթե նշված գյուղերը դիտելու լինենք որպես խոշոր հողային տիրույթներ, ապա պետք է հաստատագրենք, որ Անիի եկեղեցիներն ու վանքերը, զոնե ըստ վիմական արձանագրությունների, խոշոր ավատական հողային տիրույթներ չեն ունեցել, որ այդպիսիք ունեցել են միայն Ջաքարե Ջաքարյանի և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, առաջինը՝ XII դ., իսկ երկրորդը՝ XIII դ.: Այնուհետև, Անիի հոգևոր հաստատությունների տիրույթները նշված ժամանակաշրջանում չեն եղել մեկ միասնական համալիրներ: Դրանք եղել են անջատ, մեկուսի, կտրտված մանր տիրույթներ՝ սփռված երկրի տարբեր շրջաններում՝ հիմնականում Այրարատ անառնում:

Անիի հոգևոր հաստատությունների օգտին կատարված նվիրատվությունները կանոնավոր բնույթ չեն կրել: Դրանք պայմանավորված են եղել Հայաստանի քաղաքական իրավիճակով: Մասնավորապես 1051-ից մինչև 1151թ., մեկ հարյուրամյակի ընթացքում, վիմագրերում չի արձանագրվել նույնիսկ նվիրատվության մեկ փաստ:

**Г. С. ГРИГОРЯН - Земельные поместья церквей и монастырей в Ани X-XIII вв.** - В статье исследуются земельные владения церквей и монастырей средневековой столицы Армении Ани, приобретенные на пожертвования различных социальных слоев общества. Об этом мы узнаем из лапидарных надписей на стенах церквей и монастырей.

Исследование проясняет характер этих владений, время и условия приобретения.

Согласно лапидарным надписям, не все духовные учреждения Ани стали хозяевами крупных земельных владений. Собственниками таких владений были лишь две церкви - Св. Богородицы и Григория Просветителя; первая - в XII в., а вторая - в XIII в. Церковные владения Ани не были единым комплексом, а раздробленными мелкими владениями, разбросанными по различным уголкам страны, в основном в области Айрарат.

Эти пожертвования в Ани были сделаны с X по XIII вв. Они носили бессистемный характер и обусловлены политической ситуацией в стране. В частности, с 1051 по 1151 год, т. е. за сто лет не зафиксирован ни один факт пожертвований.

<sup>75</sup> Տե՛ս անդ, էջ 58:

<sup>76</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. Դ, Եր., 1979, էջ 12:

<sup>77</sup> Տե՛ս «Դիվան I», էջ 63:

<sup>78</sup> Տե՛ս անդ, էջ 56: